

ուղեկալ կայ» (Յիշ. Բ եւ Գ) : Ասոնցմէ ստաջինը, որ Վարդան զրահապի համար գրուած՝ Վենետիկի Միխիթարեանց Յիսուս Որդիին է, անծանօթ պատճառով մը, յիշատակարանը «յետ Ժ (10) տարեց զրեցի» կ'ըսէ : Իսկ երկրորդ զրչապիր ճաշոցը, գրուած է «Մկրտիչ քահանայի, ըստացոյի եւ նկարոյի» համար : Գծարխատարար ստացողն ու ձեռագիրը կը վտանգուին : Ստացողն է որ կը պատմէ . «... Արդ ես Մկրտիչ քահանայս ուխտ եղեալ էի զնալ յերուսաղէմ, եւ ի զբազմանէս եւ ի ծուլութենէս ոչ շտապեցայ, եւ յաղբմանէ շարին եկաւ Նուբարեանդն ի վերայ Արճիշոյ եւ թալանեց զամենեսեանս, եւ մեր չհանդիպեալ ուխտին՝ առաք զգիրքս եւ բերաք ի Տիւրքիկիս եւ տուաք ի Ղազար երէցն . եւ նա մեզ ետ Ծ (50) Փլօրի, եւ մեք տարաք յերուսաղէմ» (Յիշ. Գ.) : Նուբարեանդի այս արչաւանքին ի՞նչ եղաւ Յով. Մանգասարենց, զԺրարտարար չէ յիշատակողրուած : Իր բուն մայրը Փաշամելէք արդէն մեռած էր 1437ի իր յիշատակարանին համաձայն, եւ հայրը՝ Մանգասար վերստին ամուսնացած էր, թէեւ իր երկրորդ կնոջ անունը անյայտ կը մնայ : Յով. Մանգասարենց կը բաւականանայ միայն «եւ միւս մարս իմոյ» յիշատակութեամբ» (Յիշ. Ա.) :

1445ին, Աւետարանի զրչութեան ատեն Յով. Մանգասարենց արդէն սկսած է տառապիլ իր աչքերուն ցաւէն ու տկարութենէն . «զտկարութիւն աշացս մոռացայ, եւ զգիրքս զրեցի» : Աւետարանին զրչութիւնը կը կատարէ «ի զաւտոս Քաջբունեաց, ի յատուածապահ քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ սուրբ եկեղեցւոյս, եւ ծաղկեցաւ ի Սուրբ ուխտս Մեծօրիայ» (Մինասի ձեռքով) : Յով. Մանգասարենցի այս զրչապիր Աւետարանին մեկենասը եղած է Թովմա Մեծօրիցիի եղբոր Գորդի Մէլիքիին որդին՝ Յոհաննէս կրօնաւոր (Յիշ. Գ.) :

1450ին, միշտ «յԱրճէշ քաղաքի, ընդ հովանեաւ եւ ի դուռն սուրբ տաճարիս Գէորգեայ զաւրափարիս» կը զրէ Աւետարան մը (Յիշ. Ե.) : Մեռած են իր ծր-

նողքները, որոնց մասին հոս կը յիշէ, եւ կ'աւելցնէ . «Բայց խոշորութեան զրիս անմեղազիր լինել աղաչեմ, զի կար մեր այս է : Եւ զի սիրտս խոցեալ է ի սատանայէ : Եւ զի կենդանոյն մեռեալ եմ : Եւ աչքս ի բազում արտասուաց կուրացեալ է . զի իմ սիրական որդիքն Սահակն ու Մեսրոպն զիս սեւեցին» : Վկայութիւնը շատ որոշ չէ, թէ իր Սահակ ու Մեսրոպ որդիքը մեռե՞ր են այդ տարի, թէ զերութեան տարուեր : Եւ քանի որ յաջորդ յիշատակարաններուն մէջ անոնց մասին այլևս չի յիշեր, ստիպուած ենք խորհելու, որ մեռած են, հաւանաբար յաճախ պատահող փոխանցիկ մահացու հիւանդութեամբ մը : 1470ին պիտի տեսնենք որ իր մնացեալ երեք զաւակներն ալ նոյն տարւոյն մէջ կը մեռնին, մահատարածա՞մի մը պատճառով :

1454ին, Վարդան կրօնաւորի համար կը զրէ Աւետարան մը, մանրանկարեալ, զարձեալ Մինասէ : Յով. Մանգասարենց զրչութիւնը կը կատարէ «ի զանութեան արեւարբու բնաւորին Ջհանշայի, որ զնաց բռնութեամբ եւ էառ դժիրազ եւ զիսպահան» : Եւ մինչ ան այս արչաւանքներով զբաղած էր, իր անտէր երկիրը կ'ասպատակուէր ուրիշէ : Յովհաննէս կը զրէ . «Բայց մեք կամք ի յահ եւ ի փախ, զի զաւրքն Ուզուն-Հասանի հանապազ կու գերեն զմեզ եւ թալանեն : Ի յայսմ տառապանս կալով զրեցի զսուրբ Աւետարանս ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ եւ ի կղզիս, որ կոչի Լիմն» : Եւ զրչազրին մէջ այլուր կ'աւելցնէ . «Աւա՛ղ զառնութեան սուրբս եւ վա՛յ կենաց մերոց, որ յամէն օր Ժ (10) անգամ կու մեռնիմ յահ սպանման եւ զողալով կու զրեմ» (Յիշ. Զ.) : Պարզապէս անդերազանցելի հերոսական արարք մըն է այս, հայ մշակոյթի վաստակաւորին բոլորանուէր ծառայութիւն՝ մեր զրին ու զիրքին : Երեւակայելի որ փախտական, հոգին ձեռք առած, մագապուրծ, Ուզուն-Հասանի արիւնախանձ ջոյրներէն միշտ վտանգուած, մէկ նուիրում եւ միակ հոգ մը ունի, շարունակել եւ աւարտել իր զրչութիւնը :